առ Մանգոյ խան։ Բայց Հեթում կասկածեալ՝ թէ գուցէ ի հեռանալ իւրում ի Կիւլիկիոյ՝ զարթիցեն թշնամիք իւր, հանդարտեաց զժամանակ ինչ, և խորհէր՝ թէ զինչ արասցէ։ Այլ իբրեւ լուաւ՝ թէ հասեալ են հարկապահանջք Մանգոյ խանին յաշխարհն Հայոց և վրաց, և տառապեցուցանեն զազգն, եդ ի մտի ճանապարհ առնել առ խանն, և հնարել զխաղաղութիւն աշխարհին, և զելս ազատութեան եւս գտանել յառաւելութենէ հարկացն։

1253.—Թողեալ ապա ի վերայ աշխարհին զծերունի Հայր իւր զԿոստանդին, և օգնական նմա զորդիս իւր զԼեւոն և զԹորոս, պատրաստեցաւ գնալ։ Եւ զի ի ճանապարհորդել նորա հարկ էր անցանել ընդ երկիր թշնամեաց իւրոց, յայլ իմն կերպարանս մտեալ՝ անկաւ յուղի ընդ ծառայս իւր իբրեւ զմի ի նոցանէ, և զանխուլ ճանապարհաւ էանց ընդ այն փուլթանակի, յարոց ամսոյ ԻԸ. ի փետրվարի 4. և զայլ աշխարհս իւր հանդերձ բազմութեամբ արի արանց առաքեաց ճեպով ընդ այլեւայլ ճանապարհ և ինքն եկեալ ի Կարս, ուր նստէր յայնժամ Բաչու իշխանն, պատուեցաւ ի նմանէ յոյժ ըստ արժանի թագաւորական պատուոյ։ Եւ եկաց աւուրս ինչ ի գիւղն Վարդենիս ի տան ուրումն Հայ իշխանի, զոր Քուրդ անուանէին. մինչեւ հասին անդր և այլ աղխք ճանապարհորդութեան նորա. և ժողովեցան արքն, զորս յղեալ էր յառաջագոյն, յորս էին և վարդապետք ոմանք այսինքն մեծ Ստեփան եպիսկոպոս, Յակոբ վարդապետ, Մխիթար վարդապետ, և այլ քանի մի քահանայք։ Ժողովեալ զսոսա Հեթում էանց յաշխարհն աղուանից, (1254) և անտի անցեալ ընդ դուռն Ծորայ՝ եհաս առ իշխանն Բաթու, որ բնակեալ կայր ի սահմանս Խաչանայ առ ափն Էդիլ գետոյ, այն է Վոլկա, որ իջանէ ի ծովն Կասպից։

Անդ պատուեալ յոյժ Հեթմոյ ի Բաթուէ, և յորդւոյ նորա ի Սարդախայ՝ եկաց զաւուրս ինչ, և ապա առեալ ի նոյն Բաթուէ զօրս՝ ճանապարհորդեաց յաշխարհն Թաթարաց մեծաց և անցեալ ընդ բազում գաւառս և քաղաքս զամիսս չորս, եհաս անդր յաւուր նաւակատեաց տօնի սուրբ Խաչին, և մատուցեալ առ Մանգոյ թագաւոր զպատարագս իւր մեծարեցաւ ի նմանէ յոյժ առաւել քան զոր մարթ էր ակնուանիլ։ Եւ Մանգոյ խան յետ պահելոյ